գամվի[85]։ Եթե մեկը սիլ-ազարավ[86] թոքախտով էր հիվանդացել[87] կամ երեխա բերած կինը ճնարfom էր՝ քաշկոտ լինում, սկսում էր իրեն-իրեն խոսել, երեխային չէր կերակրում և հավատացնում էր, թե երեխան իր բերածը չէ, մերձավորներից ոչ ոքի չէր ճանաչում[88], գնում էին գյոր[89], ծածուկ քանդում էին մի գերեզման, կտրում էին թաղվածի գլուխը և նրա ճօղօղը՝ ուղեղը հանում։ Հին, արդեն չորացած ուղեղը փոշի էին դարձնում, իսկ եթե դանգը նոր թաղված էր, այդ ուղեղը մի պղնձե ամանի վրա զետեղում էին բորբոքված ածուխների բոցի վրա, որը հավաքված էր լինում դուրսը, ոչ տանը վառած խարույկի միջից։ Ածուխներից ծուխ չպիտի բարձրանա, որ ուղեղի զորությունը չցրվի և չտարածվի այլ մարդկանց վրա։ Այսպես, չորացրած ուղեղը ալյուր էին դարձնում և մի որևէ կերակուրի մեջ խառնած՝ հիվանդին էին ուտեցնում երեք օր, երեքական անգամ։ Այսպիսով հիվանդությունը հանձնվում էր այդ գանգի տիրոջ հոգուն[90]։ Ընտրվում էր գյոից հանած գանգը, ոչ թե քրիստոնեական գերեզմանատնից հանածը, անշուշտ այն պատճառով, որ քրիստոնյա ննջեցյալի գերեզման քանդելը մեծ մեղք էր համարվում։ Քրիստոնյա ննջեցյալի կամ սուրբի՝ նահատակի գերեզմանի տակից վերցրած հողը՝ խճօրունը, նույն նպատակն էր հետապնդում։ Այդ հողը ջրի մեջ լուծած՝ հիվանդին խմեցնելով՝ հիվանդությունը հանձնվում էր գերեզմանատիրոջը։

Ոչ միայն ինքը հոգին, այլև հոգու հետ նաև նրա առանձին հատկություններն ունեին նյութեղեն, ռեալ բնույթ։

Հոգին սերտ կապ է պահպանում գերեզմանի հետ։ Այդ է պատճառը, որ դիշերները, երբ հոգիները թողնում են գերեզմանները և շօո քն գնմ՝ շրջում են, մարդիկ վախենում են գերեզմանատան մոտով անցնելուց՝ չլինի՝ թե հոգիներն նրանց քաշեն իրենց մոտ կամ սկսեն նրանց հետ խաղ խաղալ։ Հենց այն նպատակով, որ հոգիները չկարողանան վեր կենալ ու շրջել, դիակները թաղում են և վրան էլ մի ծանր քար դնում ոչ թե նրա համար, որ թաղ-

---

85 Կախարդ համարված ննջեցյալին ցցով գերեզմանին գամելը տարածված էր նաև ռուս, սլավոն և գերմանացի գյուղացիների մեջ։ Харузина В., Этнография, т. I, էջ 399։

86 Ազար է կոչվում (Իրան) ամեն ծանր հիվանդություն, մանավանդ համաճարակը նաև անասունի։

87 Գորիս։

88 Արծվանիկ։

89 Թուրքական գերեզմանատուն։

90 Դանգի մեջ հոգու և նրա ունակությունների՝ արիության, իմաստության դետեղված լինելու համատից է հավանականորեն ծագել թշնամու գանգը ուտելու կամ պահելու սովորությունը, որը շատ տարածված է կուլտուրապես հետամնաց, վայրենի կոչված ժողովուրդների մեջ։ Այսպիսով, ձեռք էին բերվում թշնամիների ունակությունները, նաև ստրկացնում էին թշնամու հոգին։ Հայերենի մեջ պահվել է դարձվածք՝ մեկի գլուխն ուտել, այսինքն՝ հոգուց զրկել, մեռցնել, նրա հոգին ուտել։ Մարդկանց փոխարեն տաճարներին գանգեր էին զոհվում։ Թվում է, թե այն փաստը, որ Լճման-Հառւպար Վանում կատարած պեղումների ժամանակ Թոփրախ-Կալեում հայտնաբերած մարդկային ոսկորների մեջ չի գտել ոչ մի գանգ (Համմ. Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, էջ 152), պետք է բացատրել նրանով, որ գանգերը զոհ էին բերված տաճարին՝ նրանց տերերի հոգիները աստվածության ծառա դարձնելու համար։ Նույնպես գանգի տրեպանացիան, այսինքն ծակելը նպատակ է ունեցել հոգուն ազատ ելք տալ գլխի միջից, որ հեռանա և կարոտը չքաշի։ Այդպիսի մի գանգ տեղափոխված է Ավանի քարահանքերի մոտից՝ կարասի մեջ թաղման հետ Հայաստանի Պետ. պատմ. թանգարան։ Գանգը ծակված է դուրի օգնությամբ արդեն կնոջ մահանալուց հետո։ Կան ենթադրողներ, որ ննջեցյալը հոգեպես հիվանդ է եղել և այդ բացվածքով հիվանդություն պատճառող հաշկը հեռացված էր, կամ մեռածը շատ հաճախ էր երևացել կենդանի մնացածներին երազում։